

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅՐԻՅԱՆ ԵՎԳԵՆՅԱ ՈԱԶՄԻԿԻ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

Ը. 00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ- 2013թ.

Ատենախոսության թեման հաստատված է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԲԱԳՐԱՏ ԱՐՏԱՇԵՍԻ ԱՍԱՏՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԲՈՍՏԱՆՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ

տնտեսագիտության թեկնածու
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՖԵԼԻՔՍԻ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թվականի նոյեմբերի 15-ին ժամը 13.30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք.Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2013 թվականի հոկտեմբերի 14-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից պայմաններում, երբ ԼՂՀ տնտեսական քաղաքականությունը բնութագրվում որոշակի առանձնահատկություններով, տնտեսական քաղաքականության մեջ կիրառվում են մոտեցումներ ու սկզբունքներ, որոնք էապես տարբերվում են ՀՀ-ում համանման խնդիրների լուծումներից, գնաճի արդյունավետ կառավարումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: ԼՂՀ-ում վերջին տասը տարիներին տնտեսական աճի միջին մակարդակը կազմել է 12,2%, իսկ գնաճի միջին մակարդակը, 6,8%: Գնաճի մակարդակը ԼՂՀ-ում դրսևորվել է ավելի բարձր, քան ՀՀ-ում: Այս տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել և բացահայտել գնաճի նման դրսևորումների պատճառները և առանձնահատկությունները ԼՂՀ-ում:

Առ այսօր ուսումնասիրված չեն ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցման հիմնահարցերը ՀՀ տնտեսության հետ, որի բացահայտումը ԼՂՀ տնտեսության կայուն զարգացման համար կարևոր նախապայման է հանդիսանում:

ԼՂՀ տնտեսությունում, որտեղ վարվում է անկախ հարկաբյուջետային քաղաքականություն և ՀՀ միասնական դրամավարկային քաղաքականություն, դրամավարկային քաղաքականության դրսևորումները ունեն որոշ առանձնահատկություններ: Թեման արդիական է այժմ, երբ ԼՂՀ տնտեսությունում առկա գնաճային բարձր ճնշումների պատճառով անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց առաջացման պատճառները և ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա՝ անկախ հարկաբյուջետային քաղաքականության իրականացման պայմաններում: Այդ տեսանկյունից կարևորվում է դրամավարկային կարգավորման առանձնահատկությունների բացահայտումը ԼՂՀ տնտեսության զարգացման արդի փուլում:

ԼՂՀ նման փոքր և քաղաքական անկայուն դաշտում գտնվող պետություններում առկա են բնակչության կենսունակության զարգացման, սոցիալական բազմաբնույթ խնդիրներ, որոնց կարգավորման ուղիների բացահայտումը արդիական է ներկայիս պայմաններում: Այս առումով կարևոր է ուսումնասիրել ԼՂՀ նման պետություններում գնաճի դրսևորման առանձնահատկությունները, որտեղ միասնական դրամավարկային քաղաքականության պայմաններում առկա են տնտեսական, մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականության տարբերություններ:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում ՀՀ և ԼՂՀ տնտեսությունները, ՀՀ-ում իրականացվող դրամավարկային քաղաքականությունը: Հետազոտության առարկան ՀՀ դրամավարկային քաղաքականության ԼՂՀ տնտեսության վրա ազդեցության մեխանիզմների բացահայտումն է, ԼՂՀ տնտեսությունում գնաճի դրսևորման առանձնահատկությունների հետազոտությունն է, գնաճի ձևավորման գործոնների ուսումնասիրությունը ու դրանց կառավարմանն ուղղված մեխանիզմների բացահայտումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ դրամավարկային քաղաքականության իրականացման խնդիրները, վերլուծել դրանց դրսևորման և կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ տնտեսությունում, ինչպես նաև գնահատել ՀՀ դրամավարկային քաղաքականության՝ ԼՂՀ տնտեսության վրա ազդեցության հիմնախնդիրները՝ հաշվի առնելով ԼՂՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները: Ելնելով դրված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները:

- ուսումնասիրել դրամավարկային քաղաքականության վերաբերյալ տեսական մոտեցումները և ներկայացնել դրանց նմանություններն ու տարբերությունները:
- գնահատել ՀՀ-ում իրականացվող դրամավարկային քաղաքականության ներկայիս ձևավորված մակարդակը և ուղղությունները, ներկայացնել ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները և բացահայտել տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնները:
- ուսումնասիրել ԼՂՀ տնտեսության զարգացման ներկայիս ուղղությունները, բացահայտել տնտեսության հիմնախնդիրները, ԼՂՀ տնտեսական քաղաքականության մշակման և իրագործման առանձնահատկությունները:
- վերլուծել ԼՂՀ տնտեսությունում գնաձև պայմանավորող գործոնները, դրանց դրսևորման առանձնահատկությունները:
- ուսումնասիրել ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցության մեխանիզմները ԼՂՀ տնտեսության վրա, բացահայտել ԼՂՀ հարկաբյուջետային քաղաքականության և ՀՀ դրամավարկային քաղաքականության ներդաշնակեցման ուղղությունները:
- բացահայտել ԼՂՀ տնտեսությունում գնաձային լրացուցիչ ձևերի առաջացնող գործոնները և վեր հանել դրանց բացասական հետևանքների վերացմանն ուղղված մեխանիզմները:
- հետազոտել գնաձի արդյունավետ կառավարման ուղիները ԼՂՀ-ում:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների դրույթները, ինչպես նաև օտարերկրյա կենտրոնական բանկերի, գիտնականների մասնագիտական հրապարակումները, հաշվետվությունները և էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները: Ատենախոսության համար որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ, ԼՂՀ և այլ պետությունների պաշտոնական վիճակագրության տվյալները, փորձագիտական գնահատումները, հետազոտության արդյունքները, ՀՀ Կենտրոնական բանկի, ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նյութերը, կատարված հետազոտության համար օրենսդրական հիմք են հանդիսացել ՀՀ և ԼՂՀ օրենքները և նորմատիվային ակտերը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն: Դրանցից գիտական նորույթ են հետևյալը.

- Բացահայտվել են ԼՂՀ տնտեսությունում ձևավորվող գնաձի դրսևորման առանձնահատկությունները և դրա ձևավորման վրա ազդող գործոնները՝ ԼՂՀ-ում անկախ դրամավարկային քաղաքականության բացակայության պայմաններում:
- Ներկայացվել են ԼՂՀ հարկաբյուջետային քաղաքականության և ՀՀ դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում անհրաժեշտ համագործակցության մեխանիզմները:
- Բացահայտվել է դրամավարկային կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ տնտեսության զարգացման արդի փուլում և տրվել է ԼՂՀ-ում գնաձի կառավարման արդյունավետ մեխանիզմների կիրառման մոտեցումները:
- Առաջարկվել է ԼՂՀ պետական բյուջեյի դեֆիցիտի ֆինանսավորման արդյունավետ աղբյուրների կիրառման մեխանիզմները:

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը: Ատենախոսության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատության արդյունքները կարող են օգտագործվել ԼՂՀ-ում գնաճի դրսևորման պատճառների գնահատականները տալու և գնաճի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակման գործընթացում: Ներկայացված առաջարկությունները կարող են կիրառվել ԼՂՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների ընտրության գործընթացում, որը կչեզոքացնի գնաճային լրացուցիչ ճնշումների դրսևորմանը նպաստող գործոնները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի նիստում: Ատենախոսության հիմնական արդյունքների հրապարակվել են գիտական չորս հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածից: Աշխատանքը տպագրված է 155 տպագիր էջի վրա: Այն պարունակում է 52 գծապատկեր և 29 աղյուսակ:

ԱՏԵՆԱՆՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է դիտարկման առարկան և օբյեկտը, ներկայացված է հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական արդյունքները և նորոյթը, ստացված արդյունքների գիտական և գործնական նշանակությունը, տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ «Դրամավարկային քաղաքականության էությունը և դերը ժամանակակից տնտեսական համակարգում» գլխում քննարկվել և ուսումնասիրվել է դրամավարկային քաղաքականության էությունը և ազդեցությունը տնտեսական քաղաքականության վրա, դրամավարկային քաղաքականության տեսակներն ու գործիքները:

Ներկայումս տնտեսագիտության մեջ չկա միասնական մոտեցում դրամավարկային քաղաքականության սահմանման հարցում: Ներկայացված սահմանումներում առկա են դրամավարկային քաղաքականության վերաբերյալ տարբեր բնութագրումներ: Օրինակ, դրամավարկային քաղաքականությունն իրենից ներկայացնում է «Երկրի կառավարության կողմից փողի շրջանառության և վարկի ոլորտում իրականացվող միջոցառումների որոշակի կուրս»,¹ կամ «դրամավարկային քաղաքականությունը՝ պետության քաղաքականությունն է, ներգործելով փողի քանակի վրա, նպատակ ունենալով ապահովել գների կայունություն, բնակչության լրիվ զբաղվածություն և արտադրության իրական ծավալի աճ»:² Դրամավարկային քաղաքականությունը իրենից ներկայացնում է տնտեսական կարգավորման պետական քաղաքականության ուղղություններից մեկը: Որպես դրամավարկային քաղաքականության օբյեկտներ են հանդես գալիս փողի շուկայում առաջարկը և պահանջարկը, որոնք փոփոխվում են դրամային իշխանությունների, մասնավորապես բանկերի և ոչ բանկային կազմակերպությունների գործողությունների արդյունքում:

¹Տես Современный экономический словарь, Б. А. Райзберг, Л. Ш. Лозовский, Е. Б. Стародубцева 2008г с 340

²Տես Бельих В.С. . Правовое регулирование предпринимательской деятельности в России . М. 2008г., с.267.

Դրամավարկային քաղաքականության սուբյեկտներին կամ տնտեսագիտական գործակալներին, որոնց հետ փոխգործակցում է կենտրոնական բանկը, վերաբերում են բանկերը և այլ ֆինանսական ինստիտուտները, որոնք մասնակցում են ֆինանսական համակարգի աշխատանքներին:

Դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում մեծ նշանակություն ունի դրամավարկային կանոնների դերը: Դրամավարկային քաղաքականության կանոնների բնութագրության առումով առավել հաջող սահմանում են տվել Նոր Զելանդիայի պահուստային բանկի տնտեսագետներ Զ. դե Բրուները և Զ. Օ Ռեգանը: Ըստ վերջիններիս՝ «Դրամավարկային քաղաքականության կանոնը իրենից ներկայացնում է կենտրոնական բանկի հակազդման գործառույթ, որի համաձայն դրամավարկային քաղաքականության գործիքը արծազանքում է տնտեսական որոշ կարևոր ցուցանիշների փոփոխությանը»³

Իրենց հիմնական խնդիրն իրականացնելու համար Կենտրոնական բանկերը կարող են ընտրել դրամավարկային քաղաքականության իրականացման տարբեր ռազմավարություններ: Ներկայումս առավել լայն կիրառում ունեցող ռազմավարություններն են փոխարժեքի նպատակադրումը, փողի ագրեգատների նպատակադրումը, գնաձի նպատակադրումը: Յուրաքանչյուր պետություն, կիրառելով այս կամ այն ռազմավարությունը, պետք է ապահովի ցածր գնաձև և կայուն տնտեսական աճ: Ռազմավարության ընտրության հարցում անհրաժեշտ է հաշվի առնել և երկրում տիրող ներքին տնտեսական ու քաղաքական իրավիճակը և միջազգային շուկայում ձևավորված մոտեցումները դրամավարկային քաղաքականության ռազմավարությունների վերաբերյալ՝ չանտեսելով յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացվածության աստիճանը, տնտեսական առանձնահատկությունները:

Դրամավարկային քաղաքականության գործիքները տնտեսական փոփոխականներ են, որոնք գտնվում են դրամային իշխանությունների վերահսկողության տակ և ծառայում են գործառնական նպատակների ապահովման համար: Կենտրոնական բանկերին վերաբերող օրենսդրության մեջ Կենտրոնական բանկերին լիազորություններ են տրվում դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման առումով: Դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է գործիքակազմի ճիշտ ընտրությունից: Կախված տնտեսության զարգացվածության մակարդակից, տնտեսական առանձնահատկություններից, կիրառվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունից՝ Կենտրոնական բանկը ընտրում է դրամավարկային քաղաքականության իրականացման իր ուրույն գործիքակազմը, որը պետք է ուղղված լինի դրամավարկային քաղաքականության միջանկյալ, հետևաբար նաև վերջնական նպատակի ապահովմանը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության զարգացման և ԼՂՀ տնտեսական քաղաքականության արդի խնդիրները» գլխում տրվել են ՀՀ տնտեսության զարգացման արդի բնութագրերը և ուսումնասիրվել են ԼՂՀ տնտեսական քաղաքականության մշակման և իրագործման առանձնահատկությունները:

ՀՀ անկախ տնտեսական քաղաքականության իրականացման սկիզբը դրվեց Խորհրդային միության փլուզման նախաշեմին և 1991 թվականին ՀՀ անկախության հռչակումով: Անկախության առաջին տարիներին ՀՀ տնտեսական քաղաքականությունը ուղղված էր տնտեսության առջև դրված առաջնային հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, անկախության ծեռք բերումից հետո առաջին տարիներին, 1992-1994 թվականներին ՀՀ տնտեսական քաղաքականությունը հիմնականում

³ De Brouwer G and O Regan Monutery -Policy Rules;An application in Australia. Paper presented at the Reserve Bank of New Zealand Monetary Policy Workshop, October 1997

ուղղված էր երկրում տնտեսավարման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը, անհրաժեշտ օրենսդրաիրավական դաշտի ձևավորմանը և հակաինֆլյացիոն քաղաքականության իրականացմանը: Այդ ժամանակահատվածում կատարվեց տնտեսության անկումը և արդեն 1995 թվականից արձանագրվեց տնտեսական աճ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Շուկայական ուղղվածություն ունեցող բարեփոխումների հետևողական իրականացման արդյունքում 1995–2000թթ. ընթացքում գրանցվել է համեստ, բայց դինամիկ տնտեսական աճ: Արդեն 2000 թվականից ՀՀ տնտեսությունը սկսեց բնութագրվել կայուն տնտեսական աճով, որին նպաստեցին նաև միջազգային շուկաներում ձևավորված բարենպաստ միջավայրը: 2008 թվականից սկսած միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց վերանայել տնտեսական քաղաքականության ուղղությունները: Այդ ժամանակահատվածը բնութագրվեց ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերի անկմամբ: Արդյունքում ՀՀ-ում սկսեց վարվել մեղմ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություն, որը բնութագրվեց դրամավարկային քաղաքականության գործիքակազմի մեղմացմամբ և պետական ծախսերի ավելացմամբ, ինչի արդյունքում այդ ժամանակահատվածը նշանավորվեց աննախադեպ բարձր գնաճային ճնշումներով: Դրան հաջորդեց հակաճգնաճամային քաղաքականությունը, որը ենթադրում էր դրամավարկային և հարկաբյուջետային ազդակների խստացմամբ, ինչի հետևանքով հնարավոր եղավ որոշ չափով զսպել տնտեսությունում արձանագրված բարձր գնաճի մակարդակը:

Խորհրդային միության գոյության ընթացքում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը գործում էր հիմնականում Խորհրդային Ադրբեյջանի պահանջներին համապատասխան: Խորհրդային իշխանության տարիներին տնտեսությունը հիմնականում կենտրոնացված էր գյուղատնտեսության վրա: Դեռևս ԽՍՀՄ փլուզման նախաշեմին ԼՂՀ-ն գտնվում էր ՀՀ հետ միասնական տնտեսական կարգավորման դաշտում, որը սակայն բավականին անկանոն էր: ՀՀ տնտեսության զարգացման նշված բնութագրերը բավականին երկար չէին տարածվում ԼՂՀ տնտեսության վրա: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները տնտեսական բարեփոխումների ուղին ընտրած ԱՊՀ մյուս երկրների նման հայտնվեցին տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած բարդ խնդիրների լուծման հրամայականի առջև: 1994 թվականի զինադադարի հաստատումից հետո սկսվեց տնտեսական վերափոխումների շրջանը: Հիմք ընդունելով ՀՀ-ում իրականացվող տնտեսական բարեփոխումներին ուղղված ծրագրերի դրույթները և կիրառվող փորձը՝ ԼՂՀ-ում սկսվեց տնտեսական բարեփոխումներին ուղղված նպատակային ծրագրերի իրականացման գործընթացը: Տնտեսության կայուն զարգացման համար կարևոր էր ՀՀ և ԼՂՀ միասնական բանկային համակարգի ներդրումը: Բանկային համակարգի ձևավորումը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝

1. Ադրբեյջանի բանկային համակարգից բաժանման և ինքնուրույն ձևավորման փուլ:

2. Արցախի ինքնուրույն ԿԲ ձևավորումը և նախկին պետական առևտրային բանկերի մասնաճյուղերի միաձուլումը Հայաստանյան համապատասխան բանկերի հետ:

3. Արցախի ԿԲ կազմալուծման և ՀՀ բանկային համակարգին միաձուլման փուլ: Ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական նկատառումներով Արցախում Կենտրոնական բանկի առկայությունը ոչ ճիշտ ընթացք էր ապահովում միասնական բանկային համակարգի ձևավորման ու զարգացման համար: Այդ պատճառով ՀՀ Կենտրոնական բանկի հետ համատեղ որոշվեց կազմալուծել Արցախում ստեղծված Կենտրոնական բանկը և այն միացնել ՀՀ բանկային համակարգին: Վերջինս համարվում է արդարացված ու օբյեկտիվ որոշում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական տեսանկյունից:

4. Հրադադարից մինչև 2000թ. ընկած ժամանակաշրջան: Այս փուլում շարունակվեց բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը, որը ծանրակշիռ և լուրջ ներդրում էր համակարգի բնականոն գործունեության

ապահովման գործում: ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակված ծրագրով 1995թ. դեկտեմբերի 29-ի ԼՂՀ նախագահի թիվ ՆՀ-74 հրամանագրով Կենտրոնական և Պետական մասնագիտացված խնայողական բանկերի հիման վրա ստեղծվեց ԼՂՀ բաժնետիրական-առևտրային բանկը: 1996թ. փետրվարի 12-ին վերջինի հիման վրա ստեղծվեց «ԼՂՀ Ազգային առևտրաբաժնետիրական բանկ» ՓԲԸ-ն, որն էլ հետագայում վերանվանվեց «Արցախբանկ» ՓԲԸ: 1996 թվականի մարտի 23-թիվ ՆՀ-79 ԼՂՀ նախագահի հրամանագրով ԼՂՀ ազգային բաժնետիրական-առևտրային բանկին վերապահվեցին ԼՂՀ պետական պարտքի սպասարկման, ԼՂՀ արժույթային և թանկարժեք մետաղների ու քարերի պահուստների կառավարման, ԼՂՀ կառավարության և այլ պետական մարմինների բանկային սպասարկման, ԼՂՀ պետական բյուջեի սպասարկման լիազորությունները:

5. 2000 թվականից սկսած ԼՂՀ տնտեսությունում սկսվեց ինստիտուցիոնալ վերափոխումների նոր փուլը: Տնտեսության կայունացման հետ մեկտեղ՝ դրական փոփոխություններ տեղի ունեցան բանկերի և տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների բնագավառում: Շարունակվեց ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը:


ԼՂՀ տնտեսության զարգացման համար ամենամեծ խոչընդոտը մնում է չկարգավորված հակամարտությունը: Պատերազմից հետո ԼՂՀ-ում իրականացվել են տնտեսության զարգացմանն ուղղված բազմաբնույթ բարեփոխումներ, սակայն դրան զուգահեռ տնտեսության հետագա զարգացման համար առկա են հիմնախնդիրներ, որոնց լուծման միջոցով միայն տնտեսությունը կթևափոխի երկարատև կայուն զարգացման շրջան: Այդ հիմնախնդիրները կապված են ինչպես տնտեսական բարեփոխումների անընդհատ կատարելագործման անհրաժեշտության, անկատար մրցակցության, այնպես էլ քաղաքական անկայուն վիճակի հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցումը ՀՀ տնտեսության հետ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել տնտեսության կարգավորման գործընթացը: Ներկայումս ԼՂՀ-ն և ՀՀ-ն գործում են բանկային համակարգի կարգավորման միևնույն դաշտում: Բանկային համակարգը համարվում է ԼՂՀ տնտեսության համեմատաբար զարգացած ճյուղը, որը ներկայումս գտնվում է անընդհատ կատարելագործման փուլում: ԼՂՀ տնտեսության մնացած ճյուղերի հեռանկարային զարգացման ապահովման երաշխիքը հնարավոր կլինի ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող դրական տեղաշարժերի ազդեցությունների արդյունավետ կիրառումը ԼՂՀ-ում: ԼՂՀ տնտեսության զարգացման համար ամենամեծ խոչընդոտը մնում է չկարգավորված հակամարտությունը: Պատերազմից հետո ԼՂՀ-ում իրականացվել են տնտեսության զարգացմանն ուղղված բազմաբնույթ բարեփոխումներ, սակայն դրան զուգահեռ տնտեսության հետագա զարգացման համար առկա են հիմնախնդիրներ, որոնց լուծման միջոցով միայն տնտեսությունը կթևափոխի երկարատև կայուն զարգացման շրջան: Այդ հիմնախնդիրները կապված են ինչպես տնտեսական բարեփոխումների անընդհատ կատարելագործման անհրաժեշտության, անկատար մրցակցության, այնպես էլ քաղաքական անկայուն վիճակի հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցումը ՀՀ տնտեսության հետ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել տնտեսության կարգավորման գործընթացը: Ներկայումս ԼՂՀ-ն և ՀՀ-ն գործում են բանկային համակարգի կարգավորման միևնույն դաշտում: Բանկային համակարգը համարվում է ԼՂՀ տնտեսության համեմատաբար զարգացած ճյուղը, որը ներկայումս գտնվում է անընդհատ կատարելագործման փուլում: ԼՂՀ տնտեսության մնացած ճյուղերի հեռանկարային զարգացման ապահովման երաշխիքը հնարավոր կլինի ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող դրական տեղաշարժերի ազդեցությունների արդյունավետ կիրառումը ԼՂՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ «ԼՂ-ում տնտեսական քաղաքականության ծրագրերի և դրամավարկային քաղաքականության միջոցառումների ներդաշնակեցման խնդիրները» գլխում ուսումնասիրվել են ՀՀ դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրականացման արդի խնդիրները, դրամավարկային քաղաքականության և գնաձի դրսևորման առանձնահատկությունները ԼՂ-ում, գնաձի կառավարման առանձնահատկությունները և դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված խնդիրները ԼՂ-ում:

Ժամանակակից պայմաններում, երբ ԼՂ տնտեսական քաղաքականությունը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով, տնտեսական քաղաքականության մեջ կիրառվում են մոտեցումներ ու սկզբունքներ, որոնք էապես տարբերվում են ՀՀ-ում համանման խնդիրների լուծումներից, գնաձի արդյունավետ կառավարումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Ընդ որում գնաձի արդյունավետ կառավարումն բացի նրանից, որ կարևոր ազդեցություն կունենա ԼՂ տնտեսության վրա, կարող է որոշ ազդեցություն թողել նաև ՀՀ տնտեսության ու մասնավորապես գնաձի դրսևորումների վրա: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ թեև ԼՂ-ն իր սոցիալ-տնտեսական բնութագրերով համադրելի է ՀՀ ոչ մեծ մարզերին՝ (բնակչության թիվը կազմում է ՀՀ բնակչության 5 տոկոսը, ՀՆԱ-ի ծավալները ևս կազմում են ՀՀ ՀՆԱ-ի 5 տոկոսը, իսկ բյուջեի եկամուտները (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները, հիմնականում ՀՀ բյուջեից) շուրջ 7 տոկոսը), ապա ԼՂ ֆինանսական հատվածի բնութագրերը դրամաշրջանառության ծավալներից մինչ տարբեր աղբյուրներից ֆինանսական հոսքերը, այդ թվում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը և ԼՂ տնտեսության տարբեր հատվածներ ներդրումների ծավալները առանձնանում են ավելի բարձր ցուցանիշներով: Նշված տարբերությունները քաղաքական այն դիրքորոշումների հետևանք և արդյունքն են, որոնք տարիներ առաջ ձևավորվել էին ՀՀ-ում կոչված էին ապահովելու, մասնավորապես, պատերազմից տուժած ԼՂ տնտեսության վերականգնումը և առաջանցիկ զարգացումը, սոցիալ մշակութային գրավչությունը, ինչպես նաև լայն իմաստով վերարտադրությունը:


Տնտեսության մրցունակության ապահովման համար առավել կարևոր գործոն է համարվում գնաձի կայուն մակարդակի պահպանումը: Գնաձը ունի իր ուրույն դրսևորումները ԼՂ նման քաղաքական անկայուն դաշտում գտնվող տնտեսություններում, որտեղ միասնական դրամավարկային քաղաքականության պայմաններում առկա են տնտեսական, մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականության տարբերություններ: Բացի վերոնշյալից, գնաձի դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են նաև քաղաքական անկայուն իրավիճակով, տնտեսության մենաշնորհային բնույթով, ինչպես նաև հակամենաշնորհային քաղաքականության բացակայությամբ, չկայացած ֆինանսական շուկաներով և այլն: ԼՂ-ում գնաձի դրսևորման կարևոր առանձնահատկությունը կապված է անկախ դրամավարկային քաղաքականություն չունենալու հանգամանքի հետ: ԼՂ-ում չի իրականացվում դրամավարկային քաղաքականություն, այն իր վրա է կրում ՀՀ ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Արդյունքում, գնաձի դրսևորումները ԼՂ-ում կախված են ինչպես ՀՀ-ում վարվող դրամավարկային քաղաքականությունից, ԼՂ-ում վարվող հարկաբյուջետային քաղաքականությունից, այնպես էլ քաղաքական անկայուն դաշտում գտնվող պետությանը բնորոշ գնաձի առաջացման սուբյեկտիվ պատճառներից: Գնաձային ճնշումները ուժեղացել են հատկապես վերջին հինգ տարիներին: Դա նախ և առաջ պայմանավորված է միջազգային շուկայում դրսևորվող բարձր գնաձային ճնշումներով: Այնպիսի փոքր ու բաց տնտեսություն ունեցող պետություններում, ինչպես ԼՂ-ն և ՀՀ-ն է, գնաձի վրա մեծապես իր ազդեցություններն են թողնում արտաքին շուկայի իրադարձությունները:

ԼՂՀ տնտեսության զարգացման ներկա փուլում գնաձի արդյունավետ կառավարումը կարևոր նշանակություն ունի տնտեսության կայուն և երկարաժամկետ զարգացման տեսանկյունից: ԼՂՀ-ում գնաձի կառավարման առանձնահատկությունները պայմանավորված են ինչպես ՀՀ դրամավարկային քաղաքականության, այնպես էլ գնաձի վրա բազմաբնույթ ոչ մոնետար գործոնների ազդեցությամբ:



Գծապատկեր 1. Սպառողական գների ինդեքսի և ՀՆԱ-ի դինամիկան ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2002-2012թթ.⁴

Սպառողական գների ինդեքսը 2002-2012 թթ. ընկած ժամանակահատվածում ԼՂՀ-ում ընդհանուր առմամբ գնաձը դրսևորվել է ՀՀ-ում տեղի ունեցող գնաձային գործընթացի հետ համահունչ: 2002-2012 թվականների ընթացքում միջին տարեկան գնաձի մակարդակը ԼՂՀ-ում եղել է ավելի բարձր, քան ՀՀ-ում: Վերջինս հիմնականում պայմանավորված էր ՀՀ-ից պարենային և ոչ պարենային ապրանքատեսակների ներկրման հանգամանքի հետ:




Գծապատկեր 2. Որոշ պարենային ապրանքների գների միջին մակարդակը ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2002-2012թթ.⁵

2002-2012թթ. պարենային որոշ ապրանքատեսակների գների միջին մակարդակը ՀՀ-ում և ԼՂՀ-ում ընդհանուր առմամբ համադրելի է, բացառությամբ որոշ ապրանքատեսակների գծով արձանագրված գնաձային դրսևորումների: Վերլուծելով վերջին տասը տարիներին երկու հանրապետություններում արձանագրված պարենային ապրանքների գների ձևավորված մակարդակը,

⁴Աղբյուր. ԼՂՀ և ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված պաշտոնական տվյալներ 2002-2012թթ

⁵Աղբյուր. ՀՀ և ԼՂՀ ԱՎԾ կողմից հրապարակված պաշտոնական տվյալներ 2002-2012թթ

կարելի է եզրակացնել, որ գնաճը ԼՂՀ-ում ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են նախ և առաջ վերոնշյալ ապրանքների տեղական կամ ոչ տեղական լինելու հանգամանքի հետ, այնուհետև գնաճի դրսևորման վարքագծի վրա ազդում է նաև տվյալ ապրանքախմբի ՀՀ-ից կամ միջազգային շուկայից ներկրելու հանգամանքը: Մասնավորապես, այն ապրանքների գծով, որոնք ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԼՂՀ-ն ներ է կրում արտերկրից, գնաճի դրսևորումները երկու հանրապետություններում էլ դիտվել են համահունչ կերպով, իսկ այն արտադրատեսակները, որոնք ԼՂՀ-ն տեղական արտադրանքի ոչ բավարար լինելու պատճառով ներ են կրվում ՀՀ-ից, գնաճային ճնշումները առավել ցայտուն են դրսևորվել ԼՂՀ-ում, որը պայմանավորված է և ներկրման ծախսերով և սպառման միջնորդ օղակի ավելացմամբ: Վերլուծությունից պարզվում է, որ պարենային ապրանքատեսակներից մրգի ու բանջարեղենի գծով գնաճային ճնշումները ավելի բարձր էին ԼՂՀ-ում վերոնշյալ հանգամանքից ելնելով: Իսկ այն արտադրատեսակները, որոնց արտադրությունը համեմատաբար զարգացած է ԼՂՀ-ում, եղել են ավելի ցածր, քան ՀՀ-ում է:



Գծապատկեր 3. Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի դինամիկան ՀՀ-ում և ԼՂՀ-ում 2002-2012թթ⁶⁷

ՀՀ-ում 2002-2012 թթ ընկած ժամանակահատվածում ոչ պարենային ապրանքների գների միջին տարեկան աճը կազմել է 3.4%, իսկ ԼՂՀ-ում 4.5%: Ոչ պարենային ապրանքների գծով ԼՂՀ-ում գների մակարդակը ձևավորվում է հիմնականում ՀՀ-ի հետ համահունչ, սակայն գնաճային ավելի բարձր ճնշումներով: Դա հիմնականում պայմանավորված է նշված արտադրատեսակների մեծ մասի ՀՀ-ից ներմուծման հանգամանքով, իսկ վերջինս էլ իր հերթին ենթադրում է ՀՀ-ում արձանագրված գնաճին զերազանցում կապված տրանսպորտային ծախսերի և ներկրման հետ կապված այլ ծախսերի ու վերադիրների հետ:

Վերլուծելով վերջին տասը տարիներին ՀՀ-ում և ԼՂՀ-ում ձևավորված գնաճային դրսևորումները, կարելի է արձանագրել, որ ընդհանուր առմամբ ԼՂՀ-ում գնաճը դրսևորվել է ՀՀ-ի հետ համահունչ: Տնտեսության առանձին հատվածներում արձանագրված գնաճի մակարդակը ԼՂՀ-ում զերազանցել է ՀՀ-ի համանման ցուցանիշին, բացառություն է կազմել միայն գյուղատնտեսության ոլորտը, որտեղ արձանագրված միջին տարեկան գնաճը զիջել է ՀՀ-ի նույն ցուցանիշին: Դա հիմնականում

⁶ www.armstat.am/2002-2012թթ վիճակագրական տարեկան հրապարակումներ
⁷ www.stat-nkr.am/2002-2012թթ վիճակագրական տարեկան հրապարակումներ

պայմանավորված է ԼՂՀ-ում գյուղատնտեսության ոլորտի համեմատաբար զարգացած լինելու հանգամանքով, ուստի արտաքին գնաձային ճնշումների ազդեցությունը այս ոլորտում համեմատաբար մեղմ բնույթ է կրում: Գնաձային ճնշումները հիմնականում պայմանավորված էին պարենային ապրանքների գների աճով, որի մի մասն էլ իր հերթին պայմանավորված էր միջազգային շուկաներում ձևավորված պարենային ապրանքների գնաճով: Բարձր գնաձային միջավայրին որոշ չափով նպաստել են նաև ներքին շուկաներում ձևավորված մենաշնորհային և անառողջ մրցակցային երևույթները:

ԼՂՀ-ում գնաձի դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են տեղական արտադրության ոչ բավարար ծավալների պատճառով ՀՀ-ից ներկրման, ինչպես նաև արտերկրից ներմուծման հանգամանքի հետ: Ընդ որում հարկ է ընդգծել, որ այն ապրանքների գծով, որոնք ներմուծվում են արտերկրից, գնաձային դրսևորումները համահունչ են ՀՀ-ում արձանագրված գնաձի մակարդակին, իսկ այն ապրանքների գծով, որոնք մասամբ ներ են կրվում ՀՀ-ից առկա են գնաձի առավել բարձր մակարդակի դրսևորումներ՝ պայմանավորված ինչպես ծախսերի աճով, այնպես էլ վերջնական սպառման հասանելի դառնալու միջնորդների ավելացմամբ:

Տեղական արտադրության արտադրատեսակների գծով ԼՂՀ-ում արձանագրվում է ավելի ցածր գնաճ: ԼՂՀ-ում սպառողական գների ինդեքսի աճին, ինչպես նաև ՀՀ-ում, մեծապես նպաստում են պարենային ապրանքների գների մակարդակի աճը:


ԼՂՀ տնտեսությունը գնաձային ճնշումները իր վրա է վերցնում ինչպես միջազգային շուկայում գների տատանումներից, այնպես էլ ՀՀ-ում վարվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունից: Բացի վերը նշված հանգամանքներից ԼՂՀ-ում գնաձի դրսևորման ոչ պակաս կարևոր գործոն է հանդիսանում նաև ներքին շուկայում տիրող անառողջ մրցակցային միջավայրը, որը և ներքին շուկայում գների ձևավորման մեխանիզմի համար կարևոր խոչընդոտ է հանդիսանում:

2002-2012թթ ԼՂՀ-ում տնտեսական աճի մակարդակը դրսևորել է ավելի բարձր մակարդակ, քան ՀՀ-ում, մասնավորապես ԼՂՀ-ում տնտեսական աճի միջին մակարդակը կազմել է 12.2%, մինչդեռ ՀՀ-ում՝ 7.7%: Վերջինս պայմանավորված էր միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ՀՀ տնտեսությունում 2009թ. գրանցված 14.2% անկմամբ: Լինելով փակ տնտեսություն՝ ԼՂՀ տնտեսությունը իր վրա ամբողջովին չկրեց ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները:

Հարկ է ընդգծել, որ ԼՂՀ-ում գնաձի կառավարման խնդիրը որոշակի սրություն է ձեռք բերում ներկայիս պայմաններում, երբ մշակվում և ձեռնարկվում են տնտեսական զարգացման խնդիրներ: Այս տեսանկյունից, բացի ի սկզբանե առկա՝ ԼՂՀ-ում իրականացվող տնտեսական ու մասնավորապես ֆիսկալ քաղաքականության ՀՀ ԿԲ կողմից մշակվող դրամավարկային քաղաքականության վրա հնարավոր ազդեցության խնդիրից, առանցքային է դառնում իրականացվող դրամավարկային քաղաքականությունը տնտեսական ու հարկաբյուջետային քաղաքականության հետ փոխհամաձայնացնելու հարցը:

ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա կրում է երկակի անուղղակի բնույթ: Նախ, լինելով տնտեսության կարգավորման անուղղակի միջնորդ՝ ՀՀ ԿԲ իրականացնելով դրամավարկային քաղաքականություն՝ անուղղակիորեն ազդում է ֆինանսական շուկայի մասնակիցների վրա: Վերջիններս էլ իրենց հերթին դրսևորելով որոշակի վարքագիծ՝ տնտեսության վրա ունենում են ընդլայնողական կամ զսպող ազդեցություն: Մյուս կողմից,

իրականացնելով անկախ հարկաբյուջետային քաղաքականություն, բայց գտնվելով միասնական դրամավարկային քաղաքականության ռեժիմի տակ՝ ԼՂՀ տնտեսությունը ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը իր վրա է կրում ԼՂՀ բանկային համակարգի միջոցով, մասնավորապես վերջիններիս կողմից տնտեսությանը տրամադրվող վարկերի միջոցով: Կենտրոնական բանկի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության տարբեր գործիքների տոկոսադրույքներից կախված՝ բանկերն իրենց վարքագիծն են դրսևորում վարկերի տրամադրման ու ավանդների ներգրավման տոկոսադրույքների սահմանման տեսանկյունից: Քանի որ ԼՂՀ բանկային համակարգը հանդիսանում է ՀՀ բանկային բանկային համակարգի մասը, ԼՂՀ տնտեսությունը վերոնշյալ փոխանցումային մեխանիզմների ազդեցության շնորհիվ, իր վրա է կրում ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Սակայն, ԼՂՀ-ում իրականացվող ուրույն տնտեսական ու ֆիսկալ քաղաքականության, ինչպես նաև տնտեսությունում կիրառվող որոշակի գործիքների, ինչպիսիք են առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսների զեղչումը, արտոնյալ պայմաններով տնտեսության որոշ հատվածներին վարկերի տրամադրումը, տնտեսական նշանակություն ունեցող որոշ ծրագրերը, բարեգործական հիմնադրամների միջոցների հաշվին իրագործումը և այլն, ստեղծում են փողի առաջարկի ձևավորման ու դրսևորման առանձնահատուկ վիճակ: Ընդ որում, ժամանակի ընթացքում տնտեսական քաղաքականության կիրառվող առանձնահատուկ գործիքների ու մեխանիզմների ծավալը ընդլայնվում է: Այսպես, եթե 2002թ. ԼՂՀ-ում տրամադրված վարկերի ծավալը կազմում էր ՀՀ-ում տրամադրված վարկերի 1.5%, ապա 2012թ. այն աճել է մինչև 4.8%, այսինքն վարկավորման ծավալների տարիներ շարունակ դրսևորվող անհամադրելիությունը հաղթահարվել է և ներկայումս ԼՂՀ-ում վարկավորման ծավալները համադրելի են ՀՀ-ի համապատասխան ցուցանիշի հետ:



Գծապատկեր 4. Վարկային ներդրումների դինամիկան ԼՂՀ-ում 2002-2012թթ. ըստ տնտեսության ճյուղերի, մլն ՀՀ դրամ⁸

2002-2012թթ ընկած ժամանակահատվածում ԼՂՀ-ում ըստ տնտեսության ճյուղերի տրամադրված վարկերի դինամիկան ընդհանուր առմամբ դրսևորվել է ՀՀ համանման ցուցանիշների հետ համահունչ՝ արձանագրելով որոշ տարբերություններ: Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի դինամիկան ԼՂՀ-ում դրսևորվել է ինչպես աճի, այնպես էլ նվազման տեսքով: Վերջինիս ծավալների կտրուկ աճ գրանցվեց 2007 թվականից սկսած, այնուհետև արձանագրվեց արդյունաբերական ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների անկում մինչև 2010 թվականը, որից հետո նշված ոլորտին տրամադրվող վարկերը սկսեցին դրսևորվել աճի տեսքով:

⁸Աղբյուր. ԼՂՀ ԱՎԾ կողմից հրապարակված պաշտոնական տվյալներ 2002-2012թթ

Հարկ է ընդգծել, որ ԼՂՀ-ում գործող Արցախի ներդրումային ու Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամները գործընկեր առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով իրականացնում են արտոնյալ վարկավորման տարբեր ծրագրեր, որոնք կազմում են ընդհանուր վարկային ներդրումների 8-12%-ը: Բացի վերոնշյալից, Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից իրականացվում են փոքր և միջին բիզնեսին ուղղված ու հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրերը, իսկ Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվում են գյուղատնտեսությանը տրամադրվող արտոնյալ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագրերը: ԼՂՀ-ում գյուղատնտեսությանը ուղղված վարկերի նկատելի աճը 2010թ.-ից պայմանավորված էր հիմնադրամի կողմից իրականացվող արտոնյալ վարկավորման ծրագրերով:

ԼՂՀ տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն նաև բարեգործական տարբեր ծրագրերի իրականացումը: 2009-2012 թվականների ընթացքում իրականացվել են բարեգործական ծրագրեր՝ 11.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժույթով: Ծրագրերի մեծ մասը վերաբերում են ջրամատակարարման, կրթության և գիտության, առողջապահության և շինարարության ոլորտներին: Թեև այդ ծրագրերը բարեգործական են, այդուհանդերձ դրանք որոշակի ազդեցություն են ունենում ԼՂՀ-ում տնտեսական ակտիվության ու մասնավորապես ֆինանսական հոսքերի և, ի վերջո, նաև գնաձային միջավայրի վրա:

Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակը կայուն գների մակարդակի ապահովումն է: Այս տեսանկյունից կարևորվում է գնաձի կանխատեսելիության մակարդակի արդյունավետության բարձրացումը, որը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացը: Այս առումով կարևորվում է ՀՀ Կենտրոնական բանկի և հարկաբյուջետային քաղաքականություն մշակող և իրականացնող մարմնի միջև համագործակցության մեխանիզմների հստակեցումն ու կատարելագործումը:

Դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության չափանիշը կանխատեսված գնաձի համանման ցուցանիշի արձանագրումն է տնտեսության մեջ: Այս առումով ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ տնտեսության մեջ մեծ դեր ու նշանակություն է ձեռք բերում գնաձի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը: ԼՂՀ տնտեսության զարգացման համար հիմնական խոչընդոտը համարվում է քաղաքական անկայուն դաշտում գտնվելը: Տնտեսության զարգացմանը նաև խոչընդոտում են փոքր տնտեսություններին բնորոշ անառողջ մրցակցային միջավայրը, ինչպես նաև տնտեսության որոշ ճյուղերում առկա մենաշնորհային դրությունը: Այս առումով կարևորվում է ընդլայնել այն կառույցների լիազորությունները, որոնք պարտավորված են չթույլատրելու տնտեսության մեջ անառողջ մրցակցությամբ պայմանավորված և մենաշնորհային գների ձևավորմանը: Գնաձի կառավարման տեսանկյունից կարևորվում է պետական հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը, որը իրական խոչընդոտ կհանդիսանա տնտեսության մեջ մենաշնորհային գների ձևավորմանը:

Դրամավարկային քաղաքականության դրսևորումները ԼՂՀ-ում ունեն որոշ առանձնահատկություններ: Նախ, ԼՂՀ-ն չունենալով սեփական ազգային դրամական միավոր, չի իրականացնում անկախ դրամավարկային քաղաքականություն՝ դրանով իսկ լրիվությամբ իր վրա է կրում ՀՀ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Մյուս կողմից էլ այն իրականացնում է անկախ հարկաբյուջետային քաղաքականություն: Այս առումով կարևոր է ԼՂՀ

հարկաբյուջետային ցուցանիշների ներառումը դրամավարկային ցուցանիշների կանխատեսման ժամանակ, որը արդյունավետ կարող է իրականացվել ՀՀ Կենտրոնական բանկի և ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համագործակցության միջոցով: ԼՂՀ տնտեսության մեջ գնաձային ճնշումները պայմանավորված են նաև ներքին շուկային բնորոշ անառողջ մրցակցային ու մենաշնորհային բնույթով: Այս տեսանկյունից կարևորվում է գնաձի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը պետության կողմից, որը սակայն, չպետք է խոչընդոտ հանդիսանա շուկայական տնտեսության հիմնադրույթներին:


Աղյուսակ 1

ԼՂՀ 2010-2013 թթ պետական բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները ԼՂՀ-ում, մլն ՀՀ դրամ⁹

Ցուցանիշներ	2010	2011	2012	2013
Պետական բյուջեի եկամուտներ	56,205,842,0	60,857,944,3	65,103,572,4	70,293,778,9
Պետական բյուջեի ծախսեր	64,469,737,0	64, 714,202,0	70,320,000,0	71,066,000,0
Պետական բյուջեի դեֆիցիտ	8.265.895.0	3,856,257,7	5,216,427,7	772.221,1
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները				
Վարկերի և փոխառությունների ստացում	2,500,000.0	4,000,000.0	13,117,316.2	13,957,442.2
Ֆինանսական ակտիվներ	673,895.0	597,198.8	160,000.0	50,000.0
այդ թվում՝				
Ելքերի ֆինանսավորմանն ուղղվող տարեսկզբի ազատ միջոցներ	300,000.0	300,000.0	50,000.0	50,000.0
Տրամադրված վարկերի և փոխառությունների վերադարձից մուտքեր	30,000.0	30,000.0	10,000.0	---
Այլ	343,895.0	267,198.8	100,000.0	---

Ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները ԼՂՀ տնտեսությունը իր վրա կրեց 2010 թվականին, որը դրսևորվեց պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատմամբ: Արդյունքում առաջացավ պետական բյուջեի պակասուրդ, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսացան բանկային փոխառությունները: 2012-2013թթ փոխառությունների կտրուկ աճը պայմանավորված էր նախկին պարտավորությունների մարման անհրաժեշտությամբ, այսինքն տեղի է ունենում պետական ներքին պարտքի վերափոխում, երբ նախկինում առկա պարտավորությունները մարվում են նոր պարտավորությունների հաշվին: Այս առումով նպատակահարմար է վերլուծության ենթարկել զուտ փոխառու միջոցների դինամիկան, որոնք իրենցից ներկայացնում են փոխառությունների ստացման և մարման տարբերությունը:

⁹Աղբյուր. 2010-2013թթ ԼՂՀ Պետական բյուջեի մասին օրենքներ



Գծապատկեր 5. Փոխառու զուտ միջոցների տեսակարար կշիռը ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների կազմում 2010-2012թթ.¹⁰

2010-2012թթ ընկած ժամանակահատվածում ԼՂՀ-ում զուտ փոխառու միջոցները աճել են մոտ երկու անգամ, որը հիմնականում պայմանավորված էր բյուջետային ծախսերի կատարման անհրաժեշտությամբ:

Բանկային վարկերի միջոցով բյուջետային պակասուրդի ֆինանսավորման մեխանիզմը ԼՂՀ նման տնտեսություններում, որտեղ գնաճը պայմանավորված է նաև ոչ մոնետար գործոններով, կարող են առաջացնել լրացուցիչ գնաճային ճնշումներ: Այդ առումով նպատակահարմար է կիրառել բյուջետային պակասուրդի ֆինանսավորման այլընտրանքային տարբերակներ:

ԼՂՀ-ում բյուջետային պակասուրդի ֆինանսավորման առավել արդյունավետ աղբյուր կարող է հանդիսանալ պետական արժեթղթերի թողարկումը: Այն հնարավորություն կտա բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը իրականացնել ավելի քիչ ծախսերով, որը պայմանավորված կլինի արժեթղթերի եկամուտների գծով հարկային արտոնությունների սահմանմամբ: Արդյունքում, արժեթղթերի թողարկումը ձեռնտու կլինի և այն թողարկողի և ձեռք բերողի համար: Այս առումով անհրաժեշտ է ներդնել հստակ մեխանիզմներ արժեթղթերի թողարկման գործընթացը կազմակերպելու համար, մասնավորապես պետք է ներդրվի հստակ իրավական կարգավորման դաշտ: Արժեթղթերի թողարկման համար կարևոր նախապայման է հանդիսանում արժեթղթերի ապահովվածությունը: Արժեթղթերը պետք է ապահովված լինեն բյուջետային եկամտով, բյուջետային երաշխիքով կամ այն ծրագրի եկամտով, որի համար թողարկվում են վերոնշյալ արժեթղթերը: Արժեթղթերի թողարկման կարևորագույն սկզբունքներից է դրա մարման ապահովվածությունը, ինչպես նաև թափանցիկությունն ու դրանց նկատմամբ հստակ վերահսկողության իրականացումը:

Ջարգացած պետություններում պետական և տեղական կառավարման մարմիններին կից ստեղծված են հատուկ գործակալություններ, որոնք իրականացնում են արժեթղթերի թողարկումը և հաշվառումը: ԼՂՀ-ում սկզբնական շրջանում նպատակահարմար կլինի այդ գործառույթը վերապահել ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, այնուհետև բնակչության վստահությանը զուգընթաց կիրառել միջազգային պրակտիկայի դրույթները: Արժեթղթերի թողարկման,

¹⁰Աղբյուր. 2010-2012թթ ԼՂՀ Պետական բյուջեի մասին օրենքներ

տեղաբաշխման և հաշվառման գործընթացը արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից անհրաժեշտ է ՀՀ կառավարության հետ կնքել համագործակցության համաձայնագիր, որով կապահովվի արժեթղթերի տեղաբաշխման ու հաշվառման ձիշտ և կանոնակարգված մեխանիզմների ներդրումը: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկում պետք է իրականացվի հետևյալ փուլերով.

- Արժեթղթերի թողարկման մասին համապատասխան որոշման ընդունում
- Արժեթղթերի գրանցումը՝ հիմք ընդունելով վերոնշյալ որոշումը
- Արժեթղթերի տեղաբաշխումը
- Արժեթղթերի տեղաբաշխման մասին հաշվետվության ներկայացում

Արժեթղթերի տեղաբաշխումից հետո անհրաժեշտ է հստակ հաշվառման մեխանիզմների ներդրումը, որի արդյունքում հնարավորություն կլինի արդյունավետ վերահսկողություն սահմանել արժեթղթերի տեղաբաշխման, դրանց գծով տոկոսների վճարման և մարման նկատմամբ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկումը պետք է իրականացվի հաշվի առնելով տվյալ տարում պլանավորվող բյուջեյի դեֆիցիտի չափը, դրա ֆինանսավորման այլընտրանքային տարբերակները, տեղաբաշխման անհրաժեշտության աստիճանը: Սակայն արժեթղթերի թողարկման ժամանակակից փորձը բնութագրվում է վճիռների կայացման ֆիսկալ նախապատվություններով, երբ առաջնային է բյուջեի պակասուրդի ֆինանսավորման հարցը, մինչդեռ դրամավարկային հետևանքները ընդհանրապես հաշվի չեն առնվում: Թողարկվելիք պարտատոմսերի ծավալի ներկայումս մեծ չէ, սակայն նշված գործիքը առաջիկայում կարող է լուրջ միջոց հանդիսանալ ոչ միայն բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորման, այլև բազմաբնույթ ներդրումային ծրագրերի իրականացման և հեռանկարային խնդիրների լուծման համար: Տվյալ դեպքում կիրառվող գործիքը կարող է գնաձային զգալի ռիսկեր պարունակել և այդ խնդրի կարգավորումը կարևոր դեր կունենա ԼՂՀ տնտեսական քաղաքականության արդյունավետության ու գնաձի կառավարման առումով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել որոշ եզրակացություններ, որոնցից հիմնականները հետևյալն են.

- ❖ Ներկայացվել է ՀՀ և ԼՂՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները, տրվել են տնտեսության զարգացման բնութագրութագրեր, բանկային համակարգի ձևավորման ու կայացման փուլերը, բացահայտվել են յուրաքանչյուր փուլին բնորոշ գծերը, վերլուծության է ենթարկվել տնտեսության տարբեր ճյուղերում արձանագրված ցուցանիշների մակարդակը և բացահայտվել՝ դրանց տատանումների պատճառները:
- ❖ Գնահատվել է ԼՂՀ տնտեսության ձևավորված մակարդակը, բացահայտվել են ԼՂՀ կազմավորման սկզբից առ այսօր տնտեսության զարգացման ուղղությունները: Ներկայացվել են ԼՂՀ-ում բանկային համակարգի ձևավորման ու կայացման փուլերը:
- ❖ Հետազոտվել են ԼՂՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոնները և հիմնախնդիրները: Արձանագրվել է, որ ԼՂՀ տնտեսության զարգացման համար հիմնական խոչընդոտը հանդիսանում է քաղաքական անկայուն դաշտում գտնվելը: Պատերազմից հետո ԼՂՀ-ում իրականացվել են տնտեսության զարգացմանն ուղղված բազմաբնույթ բարեփոխումներ, սակայն դրան զուգահեռ տնտեսության հետագա զարգացման համար առկա են հիմնախնդիրներ, որոնց լուծման միջոցով միայն տնտեսությունը կթևափոխի երկարատև կայուն զարգացման շրջան: Այդ հիմնախնդիրները կապված են ինչպես տնտեսական բարեփոխումների անընդհատ կատարելագործման

անհրաժեշտության, անկատար մրցակցության, այնպես էլ քաղաքական անկայուն վիճակի հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցումը ՀՀ տնտեսության հետ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել տնտեսության կարգավորման գործընթացը: Տնտեսության զարգացմանը նաև խոչընդոտում են փոքր տնտեսություններին բնորոշ անառողջ մրցակցային միջավայրը, ինչպես նաև տնտեսության որոշ ճյուղերում առկա մենաշնորհային դրությունը: Այս առումով կարևորվում է ընդլայնել այն կառույցների լիազորությունները, որոնք պարտավորված են չթյույլատրելու տնտեսության մեջ անառողջ մրցակցությամբ և մենաշնորհային գների ձևավորմանը: Գնաձի կառավարման տեսանկյունից կարևորվում է պետական հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը, որը իրական խոչընդոտ կհանդիսանա տնտեսության մեջ մենաշնորհային գների ձևավորմանը:

❖ Վերլուծության են ենթարկվել ԼՂՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2000-2012թթ ընկած ժամանակահատվածի համար: Ուսումնասիրվել են սպառողական ապրանքների, մատուցված ծառայությունների, արդյունաբերական արտադրանքի, գյուղատնտեսական արտադրանքի գների դինամիկան ԼՂՀ-ում: Վերլուծության արդյունքում նշված ցուցանիշները համեմատվել են ՀՀ-ում արձանագրված նույն ցուցանիշների հետ, որի արդյունքում բացահայտվել է ԼՂՀ-ում գնաձի դրսևորման առանձնահատկությունները: ԼՂՀ-ում գնաձի դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են տեղական արտադրանքի ոչ բավարար լինելու պատճառով ՀՀ-ից ներկրման, ինչպես նաև արտերկրից մերմուծման հանգամանքի հետ: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ այն ապրանքների գծով, որոնք ներմուծվում են արտերկրից, գնաձային դրսևորումները համահունչ են ՀՀ-ում արձանագրված գնաձի մակարդակին, իսկ այն ապրանքների գծով, որոնք մասամբ ներ են կրվում ՀՀ-ից առկա են գնաձի առավել բարձր մակարդակի դրսևորումներ՝ պայմանավորված ինչպես ծախսերի աճով, այնպես էլ վերջնական սպառման հասանելի դառնալու միջոցների ավելացմամբ: Տեղական արտադրանքի գծով ԼՂՀ-ում արձանագրվել է ավելի ցածր գնաձ:

❖ ԼՂՀ-ում իրականացվող ուրույն տնտեսական ու ֆիսկալ քաղաքականության, ինչպես նաև տնտեսությունում կիրառվող որոշակի գործիքների, ինչպիսիք են առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսների զեղչումը, արտոնյալ պայմաններով տնտեսության որոշ հատվածներին վարկերի տրամադրումը, տնտեսական նշանակություն ունեցող որոշ ծրագրերի բարեգործական հիմնադրամների միջոցների հաշվին իրագործումը և այլն, ստեղծում են փողի առաջարկի ձևավորման ու դրսևորման առանձնահատուկ վիճակ: Ընդ որում ժամանակի ընթացքում տնտեսական քաղաքականության կիրառվող առանձնահատուկ գործիքների ու մեխանիզմների ծավալը ընդլայնվում է: Այսպես, եթե 2002թ. ԼՂՀ-ում տրամադրված վարկերի ծավալը կազմում էր ՀՀ-ում տրամադրված վարկերի 1.5%, ապա 2012թ. այն աճել է մինչև 4.8%, այսինքն վարկավորման ծավալների տարիներ շարունակ դրսևորվող անհամադրելիությունը հաղթահարվել է և ներկայումս ԼՂՀ-ում վարկավորման ծավալները համադրելի են ՀՀ-ի համապատասխան ցուցանիշի հետ: Վերջին տարիներին ԼՂՀ տնտեսության տրամադրվող վարկերի կառուցվածքում արտարժույթային վարկերի ծավալների աճը բացասաբար է անդրադառնում տնտեսության վրա՝ լրացուցիչ գնաձային ճնշումներ ձևավորելու տեսանկյունից:

❖ Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ներդաշնակեցման առումով ՀՀ-ում գործում է «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ Կենտրոնական բանկի միջև համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր (կնքված 13.10.2006թ.): Դրամավարկային քաղաքականության կարգավորման արդյունավետության տեսանկյունից ցանկալի

կլիներ վերոնշյալ համաձայնագիրը կնքել նաև ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև, որը հնարավորություն կտա ԼՂՀ հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները հաշվի առնել ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակման ժամանակ: Այս գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով նախընտրելի կլինի վերոնշյալ համաձայնագրի շրջանակներում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից իրականացվի ԼՂՀ-ում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ՀՀ համապատասխան բանկերի մասնաճյուղերի կողմից ԼՂՀ տարածքում իրականացված ֆինանսական գործառնությունների համալիր վերլուծություններ, որն առավել թափանցիկ ու մատչելի կդարձի կանխատեսելիության աստիճանը: Այս առումով առավել կարևորվում է ՀՀ դրամավարկային քաղաքականության մշակման ժամանակ հաշվի առնել ԼՂՀ հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կանխատեսել դրամավարկային ցուցանիշները և կառավարել գնաձային դրսևորումները:

❖ ԼՂՀ-ն, չունենալով սեփական ազգային դրամական միավոր, չի իրականացնում անկախ դրամավարկային քաղաքականություն՝ դրանով իսկ լրիվությամբ իր վրա է կրում ՀՀ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Այս առումով կարևոր է ԼՂՀ հարկաբյուջետային ցուցանիշների ներառումը դրամավարկային ցուցանիշների կանխատեսման ժամանակ, որը արդյունավետ կարող է իրականացվել ՀՀ Կենտրոնական բանկի և ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համագործակցության միջոցով:

❖ Ուսումնասիրվել է Աբխազիայի և Մերձդնեստրյան մոլդովական Հանրապետություններում ձևավորված գնաձային դրսևորումները 2004-2011թթ համար: Նշված ցուցանիշները համեմատվել են ԼՂՀ-ում համանման ցուցանիշների հետ, որի արդյունքում արձանագրվել է, որ վերոհիշյալ պետություններում առկա է գնաձային ավելի բարձր միջավայր տնտեսության բոլոր ճյուղերում: Նշված ժամանակահատվածում Աբխազիայում միջին տարեկան գնաձևը կազմել էր 14.4 %, Մերձդնեստրյան մոլդովական Հանրապետությունում՝ 16.2%: Գնաձի նման բարձր ցուցանիշները պայմանավորված էին հիմնականում արտաքին շուկայից կախվածության բարձր աստիճանով:

❖ ԼՂՀ նման փոքր ու բաց տնտեսություն ունեցող պետություններում գնաձի ձևավորման համար բավարար չափով հիմք են հանդիսանում ոչ մոնետար՝ այդ թվում նաև՝ հարկաբյուջետային ազդակը: Այս առումով կարևոր դեր ու նշանակություն է ձեռք բերում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համահարթեցումը: Վերջինիս իրագործման նպատակով՝ հիմք ընդունելով ՀՀ-ում իրականացվող փորձը, ցանկալի կլիներ յուրաքանչյուր տարվա ԼՂՀ բյուջեի նախագծի քննարկման ընթացքում հաշվի առնել ՀՀ Կենտրոնական բանկի՝ որպես միասնական դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմնի եզրակացությունը վերոնշյալ նախագծի վերաբերյալ:

❖ Վերջին տարիներին ԼՂՀ-ում սկսել է կիրառվել բանկային վարկերի միջոցով բյուջետային պակասուրդի ֆինանսավորման մեխանիզմը, որը ԼՂՀ նման տնտեսություններում, որտեղ գնաձը պայմանավորված է նաև ոչ մոնետար գործոններով, կարող են առաջացնել լրացուցիչ գնաձային ճնշումներ: Այդ առումով նպատակահարմար է կիրառել բյուջետային պակասուրդի ֆինանսավորման այլընտրանքային տարբերակներ, մասնավորապես արդյունավետ աղբյուր կարող է հանդիսանալ պետական արժեթղթերի թողարկումը: Այն հնարավորություն կտա բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը իրականացնել ավելի քիչ ծախսերով, որը պայմանավորված կլինի արժեթղթերի եկամուտների գծով հարկային արտոնությունների սահմանմամբ: Արժեթղթերի թողարկման ընթացքում

կարևոր նշանակություն ունի դրանց օպտիմալ ծավալի սահմանումը: Հաշվի առնելով ԼՂՀ-ում բյուջետային պակասուրդի ֆինանսավորման ներկայիս ձևավորված դինամիկան՝ նախընտրելի կլինի, որպեսզի արժեթղթերը կազմեն ԼՂՀ պետական բյուջեի սեփական եկամուտների 13-16%-ի չափով: Արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և հաշվառման գործընթացը արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից անհրաժեշտ է ՀՀ կառավարության հետ կնքել համագործակցության համաձայնագիր, որով կապահովվի արժեթղթերի տեղաբաշխման ու հաշվառման ճիշտ և կանոնակարգված մեխանիզմների ներդրումը:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայրիյան Ե.Ռ. Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացման հիմնահարցերը ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009, էջ 242-243:
2. Հայրիյան Ե.Ռ. Դրամավարկային քաղաքականության գործիքների արդյունավետության խնդիրները ՀՀ-ում: «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» #7(133)/Հունիս 2011թ., էջ 10-11:
3. Հայրիյան Ե.Ռ. ԼՂՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրները: «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» #4(154)/Ապրիլ 2013թ., էջ 35-38:
4. Ասատրյան Բ.Ա., Հայրիյան Ե.Ռ. Գնաձի կառավարման առանձնահատկությունները և դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված խնդիրները ԼՂՀ-ում: «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա» #6(156)/Հունիս 2013թ., էջ 23-26:

АЙРИЯН ЕВГЕНИЯ РАЗМИКОВНА

ОСОБЕННОСТИ ДЕНЕЖНО-КРЕДИТНОГО УРЕГУЛИРОВАНИЯ НА СОВРЕМЕННОЙ СТАДИИ
РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ НКР

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 «Экономика, управление хозяйством и ее отраслями».

Защита диссертации состоится 15-го ноября 2013г. в 13:30 на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском Государственном Университете. по адресу 0025, РА, г.Ереван, ул. Х.Абовяна 52.

РЕЗЮМЕ

В экономике Нагорного Карабаха, где ведется независимая налогово-бюджетная политика и совместная с РА денежно-кредитная политика, проявления денежно-кредитной политики имеют некоторые особенности. Тема актуальна, так как по причине высокого инфляционного давления в экономике Нагорного Карабаха возникает необходимость изучения причин ее возникновения и влияния денежно-кредитной политики РА на экономику Нагорного Карабаха в условиях проводимой там независимой налогово-бюджетной политики. С этой точки зрения важно выявить особенности денежно-кредитного урегулирования на современной стадии развития экономики Нагорного Карабаха.

Целью исследования является изучение задач осуществления денежно-кредитной политики РА, анализ особенностей их проявления и урегулирования в экономике Нагорного Карабаха, а также оценка основных проявлений влияния денежно-кредитной политики РА на экономику Нагорного Карабаха с учетом особенностей развития его экономики.

Исходя из поставленных целей, в диссертации были предложены и решены следующие задачи:

- Изучить теоретические основы денежно-кредитной политики и представить сходства и различия между ее видами;
- Оценить сформировавшийся уровень и направления денежно-кредитной политики РА, представить особенности развития экономики РА и выявить факторы, препятствующие развитию экономики;
- Изучить текущие направления развития экономики Нагорного Карабаха, выявить основные задачи развития экономики и особенности разработки и реализации экономической политики Нагорного Карабаха;
- Проанализировать уровень инфляции экономики в Нагорном Карабахе, обуславливающие инфляцию и особенности их проявления;
- Изучить механизмы влияния денежно-кредитной политики РА на экономику Нагорного Карабаха, выявить направления координации налогово-бюджетной политики Нагорного Карабаха и денежно-кредитной политики РА;
- Выявить факторы, создающие дополнительное инфляционное давление в экономику Нагорного Карабаха и раскрыть механизмы, направленные на устранение негативных последствий этого явления;
- Исследовать эффективные пути управления инфляцией в Нагорном Карабахе.

Стандарт эффективности реализации денежно-кредитной политики - это фиксация подобного индекса прогнозируемой инфляции в реальной экономике. В связи с этим как в Республике Армения, так и в экономике Нагорного Карабаха важную роль и значение приобретает применение новых механизмов по эффективному регулированию инфляции. Самым большим препятствием для развития экономики Нагорного Карабаха является неразрешенный конфликт. После войны в Нагорном Карабахе были осуществлены различные реформы, направленные на развитие экономики, однако и сегодня в экономике Нагорного Карабаха есть проблемы, только после решения которых экономика вступит в период долгосрочного стабильного развития. Эти проблемы связаны как с необходимостью постоянного совершенствования экономических реформ, с несовершенной конкуренцией, так и с нестабильной политической ситуацией. В связи с этим важную роль приобретает гармонизация экономик Нагорного Карабаха и Республики Армения, что даст возможность для более эффективного регулирования экономики.

В современных условиях, когда экономическая политика Нагорного Карабаха характеризуется рядом особенностей, в экономической политике используются подходы и принципы, значительно различающиеся от решения подобных проблем в Республике Армения, эффективное регулирование инфляции приобретает особое значение. При этом, эффективное регулирование инфляции, кроме важного влияния на экономику Нагорного Карабаха, может иметь и некоторое влияние на экономику Республики Армения и особенно на показатель инфляции. При этом нужно иметь в виду, что не смотря на то, что Нагорный Карабах своими социально-экономическими характеристиками сопоставим с небольшими регионами Армении, характеристики финансового сектора, объемов денежного оборота, финансовых поступлений из разных источниках, в том числе и финансирование из государственного бюджета, и объемы инвестиций в экономику Нагорного Карабаха выделяются более высокими показателями. Выделенные отличия являются результатом тех политических позиций, которые образовались много лет назад в Республике Армения и были призваны обеспечить восстановление и развитие пострадавшей от войны экономики Нагорного Карабаха, повышение социально-культурной привлекательности.

Основные результаты и научная новизна диссертации заключаются в следующем:

- Выявлены особенности проявления инфляции в экономике Нагорного Карабаха и действующие на нее факторы в условиях отсутствия независимой денежно-кредитной политики Нагорного Карабаха;
- Представлены необходимые механизмы координации налогово-бюджетной политики Нагорного Карабаха и денежно-кредитной политики РА;
- Выявлены особенности денежно-кредитного урегулирования на данной стадии экономического развития Нагорного Карабаха и даны подходы к применению эффективных механизмов управления инфляцией в Нагорном Карабахе;
- Предложены эффективные источники финансирования дефицита государственного бюджета Нагорного Карабаха.

THE MONETARY ARRANGEMENT SPECIFICS IN NKR ECONOMY DEVELOPMENT MODERN STAGE

The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Doctor of Economics in the field of "Economics, Management of Economy and its Sectors" 08.00.02.

The Defense of the Dissertation will take place at 13.30, on November 15, 2013, at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan St., Yerevan 0009, Armenia.

SUMMARY

In the Nagorno-Karabakh economy where independent fiscal policy and the Republic of Armenia united monetary policy keeps, the monetary policy display has some characteristics. The topic is contemporary, as there is a necessity for the high inflation pressure to study its cause and the influence of RA monetary policy on the Nagorno-Karabakh economy, in the condition of independent fiscal policy. In this context, it is important to reveal the characteristics of monetary arrangement in the Nagorno-Karabakh economic development modern stage.

The aim of research is to study the fulfilment problems of RA monetary policy, to analyze its display and arrangement peculiarities in the Nagorno-Karabakh economy, as well to qualify the problems of influence of RA monetary policy on the Nagorno-Karabakh economy, regarding the peculiarities of the Nagorno-Karabakh economic development. For realising these objects, it is put forward and solved the following problems:

- to study the theoretical approach concerning monetary policy and to introduce the similarities and differences.
- to qualify the RA monetary policy current level and directions, to introduce the characteristics of RA economic development, to reveal the factors preventing the development of economy.
- to study the Nagorno-Karabakh economic development current directions, to reveal problems set before economy, the improvement and realisation peculiarities of the Nagorno-Karabakh economical policy.
- to analyze the inflation level in the Nagorno-Karabakh economy, the inflation factors and those peculiarities.
- to study the mechanisms of RA monetary policy influence on the Nagorno-Karabakh economy, to reveal the Nagorno-Karabakh fiscal policy and RA monetary policy coordination directions.
- to reveal the factors causing additional pressure on inflation in the Nagorno-Karabakh economy and to detect the mechanisms for removing the negative results.
- to study the ways of effective inflation management in the Nagorno-Karabakh.

The efficiency standard of the monetary policy is the record of the similar indicator of predicted inflation in the real economy. In this regard in RA as well as in the economy of Nagorno-Karabakh the implementation of the mechanisms of effective regulation of inflation has a huge role and importance. For the development of the economy of Nagorno-Karabakh the biggest impediment is the unregulated conflict.

After the war in Nagorno-Karabakh there has been various reforms towards the economic development, though in spite of that for the further development of the economy there are some issues, and only after solving them, the economy will step in the sustainable period of long-term development. Those issues are connected with the necessity of economic reform improvement, with the imperfect competition, as well as with the unstable political situation. In this regard the harmonization of the Nagorno-Karabakh economy with the economy of Republic of Armenia gains an importance, which will give an opportunity of a more effective economic regulation.

In modern conditions when the economic policy of the Nagorno-Karabakh is characterized with certain peculiarities such approaches and principles are used in the economic policy which are essentially different from resolutions of similar problems in the Republic of Armenia, effective regulation of inflation acquires significant importance.

Moreover, effective regulation of the inflation will not only have an important influence on the economy of the Nagorno-Karabakh but also may have a certain influence on the economy of the Republic of Armenia and particularly on the forms of inflation. Moreover, it must be taken into consideration that though the Nagorno-Karabakh with its social-economic characteristics is comparable to small regions of the Republic of Armenia, the characterizations of the financial sector of the Nagorno-Karabakh from amounts of the money turnover to financial flows from different sources, including funding from the State Budget of the Republic of Armenia and amounts of investments in different sectors of the economy of the Nagorno-Karabakh are distinguished with higher indices. The specified differences are the consequence and result of the political positions which were formed in the Republic of Armenia years ago and were to secure particularly the restoration of the economy of the Nagorno-Karabakh suffered from the war and progressive development, social-cultural attractiveness, as well as reproduction in a wide sense.

The main results of dissertation have theoretical, methodical and applied directions. The scientific innovations are:

- It is revealed the peculiarities of emerging inflation in the Nagorno-Karabakh economy and the factors influenced on it in the absence of the Nagorno-Karabakh independent monetary policy.
- It is introduced the necessary cooperation mechanisms during realising the Nagorno-Karabakh fiscal policy and RA monetary policy.
- It is revealed the characteristics of monetary management in the current stage of the Nagorno-Karabakh economic development and it is given the approach for applying the effective mechanisms of inflation management in the Nagorno-Karabakh.
- It offered the use of mechanisms of effective sources for financing the Nagorno-Karabakh state budget.

